

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ
ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁեԿ. Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Պետրոսյան
Ժողովին մասնակցում էին 152 մարդ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Պետրոսյանը, ժողովի մասնակիցներին հակիրճ ներիկայացրեց առաջիկայում կատարման ենթակա հրատապ լուծում պահանջող ծրագրերը:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Պետրոսյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբյեկտիվ և սյուբեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որը կազմում է շուրջ 90.0% հանգամանք, որը խիստ մտահոգիչ է և միաժամանակ դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը: Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2018 թվականի բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, որն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված /հազ.դրամ/	Փաստացի /հազ.դրամ/	Կատարման %-ը
Ընդամենը սեփական եկամուտներ՝ որից	17365,2	19648,2	113,1
Հողի հարկ	2840,0	2997,1	105,5
Գույքահարկ	10527,0	12790,3	121,5
Տեղական վճարներ	3300,0	3371,4	102,2
Հողի վարձավճար	33,2	10,8	32,5
Տեղական տուրքեր	655,0	429,6	65,6
Այլ միջոցներ	10,0	49,0	-

Նշվեց, որ ընթացիկ տարում գյուղատնտեսական մշակաբույսերին որոշակի վնաս հասցրեցին ցրտահարությունները:

Ներկա պահին ընդանում են <<Ոռոգման համակարգերի արդիականացման>> ծրագրերի շրջանակներում <<խտպան>> կոչվող տարածքում ինքնահոս ջրագծերի անցկացման աշխատանքներ, որը հնարավորություն կտա ոռոգել շուրջ 320,0հա հողատարածք: Այնուհետև համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Պետրոսյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2018 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Բարեկարգվել է համայնքի կենտրոնում գտնվող պուրակը, տեղադրվել նստարաններ և աղբամաններ:
2. Համայնքի կենտրոնական և նրան հարող հատվածներում իրականացվել է ասֆալտի փոսալցման աշխատանքներ:
3. Վերջապես 4 տարվա ընդմիջումից հետո աշխատանքները վերսկսեց <<Նորակերտի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը: Նախկին երկու խմբի փոխարեն ներկայումս գործում է երեք խումբ՝ 86 երեխաներով:
4. Մանկապարտեզի կարիքների համար ձեռք է բերվել շուրջ 2.5մլն դրամի գույք՝ կահույք, սառնարան, գազոջախ, օդորակիչ և այլն:
5. Միջոցառումներ են մշակվել համայնքի բնակիչներին տրվող սոցիալական օգնությունները ավելի հասցեական դարձնելու ուղղությամբ՝ այն հիմնականում տրվում է բուժում ստացող, առողջական խնդիրներ ունեցող բնակիչներին որպես համավճարներ, հանգուցյալների սգո պարագաների ձեռք բերման մասնակի հատուցման կարգով:
Ամանորին ընդառաջ համայնքի 80 և ավելի տարիք ունեցող մեծահասակ բնակիչներին թվով 45 մարդու տրվել է 15000-ական դրամ աջակցություն:
Իսկ համայնքի ամենատարեց կնոջը՝ 94-ամյա Աշխեն Խլղաթյանին, ցուցաբերվել է առանձնահատուկ ուշադրություն:
6. Ամանորյա նվերներ են բաժանվել մանկապարտեզ հաճախող երեխաներին, դպրոցի 1-4-րդ դասարանների աշակերտներին, մշակույթի տանը գործող պարի և թատերական խմբակներ հաճախող երեխաներին:
Տրամադրվել է տրանսպորտ պարի անդամներին Երևան գնալու և վերադառնալու համար, իսկ ամանորի նախօրեին կազմակերպվել են տոնական տարբեր միջոցառումներ՝ հրավառություն, Ձմեռ պապի հրավիրում և այլն:
7. Այնուհետև նշվեց, որ չնայած կատարված զգալի աշխատանքներին այնուամենայնիվ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող խնդիրները, դրանք են՝
ա) ոռոգման ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը,
բ) դպրոցում մարզադահլիճի բացակայությունը,
գ) համայնքի փոստային բաժանմունքի շենքի հիմնանորոգման խնդիրը:
8. Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պետրոսյանը նշեց առաջիկա անելիքների մասին, դրանք են՝
1. Համայնքում Արմաթ լաբարատորիայի մասնաճյուղի հիմնադրումը,
2. Մանկապարտեզում գույքի ձեռք բերումը,
3. Ներհամայնքային փողոցների բարեկարգումը,
4. Համայնքի գերեզմանատան բարեկարգումը, ճանապարհների նորմալ վիճակի բերում,
5. Բնակչության կուլտուր – կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված մյուս համալիր միջոցառումների շարունակական ուշադրության կենտրոնում պահելը՝ շեշտը դնելով համայնքում տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրերի իրականացմանն ուղղված ջանքերի վրա (դրանք են

բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգումը, փոքր արտադրամասերի ներդրումը, ներտնտեսային ջրագծերի կառուցումը և այլն):

9. Միաժամանակ Ա. Պետրոսյանը նշեց, որ իր հետագա աշխատանքային գործունեությունը լինելու է բաց և թափանցիկ, համայնքի յուրաքանչյուր բնակիչ գործող կայքի միջոցով հաղորդակից կարող է լինել կատարվող բոլոր իրադարձություններին:

Վերջում համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Պետրոսյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետև ևս համայնքի նորընտիր ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի և անձամբ իր կողմից արվելու է հնարավոր ամեն բան համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնարավորության սահմաններում լուծում տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



2019 թվական հունվարի 17

գ. Նորակերտ